


ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿՆ ՕԳՆԵՑ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻՆ

Posted on January 31, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Թե ինչպես Խրիմյան Հայրիկն օգնեց Թերլեմեզյանին

<https://www.vnews.am/post/the-inchpes-khrimyan-hayrikn-ognec-therlemezyanin>

Հեղինակ՝ [naira-art](#)

1820 թ. ապրիլի 4-ին ծնվել է հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային գործիչ, մտավորական ու գրող, հայոց եկեղեցու 125-րդ կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին: Մեզ բոլորիս առավել ծանոթ անունով՝ Խրիմյան Հայրիկը:

Այս առթիվ ձեզ ենք ներկայացնում հայ ականավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանի հուշը՝ կաթողիկոսի մասին, որն օգնում է բացահայտել նրան լիովին՝ և՛ որպես մարդ, և՛ որպես հոգևորական:

«Մի քիչ փող էի հավաքել, որոշեցի գնալ Պետերբուրգ՝ նկարչություն սովորելու... իմ ընկեր Ազնավուրյանին խնդրեցի մասին երթալ Վանից ծանոթ Խրիմյանի մոտ, որը այդ օրերին Թիֆլիսումն էր, մտածելով որ նա կարող է մի հանձնարարակով ինձ օգնել:

Խրիմյանը մեզ ընդունեց իր ննջարանում, ուր նա անկողնի վրա ընկողմանած երգում էր: Մի քիչ սպասեցնելուց հետո՝ դադարեցրեց իր դուրեկան երգը և գլուխը մեզ դարձնելով հարցրեց, թե ինչու եմ եկել: Պատասխանեցի, որ գնում եմ Պետերբուրգ նկարչություն սովորելու, եկա Վեհափառությանդ ցուցմունքներ ստանալու:

«Ա~» արավ և տեղից բարձրացավ ու շեշտակի ինձ նայելով ասաց. «Ծո, ապու՛շ, նկարչությունը պատանեկությունից են սկսում, դու երեսուննանց մարդ և հետո, հրացան և մատիտ իրար հետ ի՞նչ կապ ունեն: Ընկերներ ունես, գործ ունես»:

Պատասխանեցի. «Վեհափառ տեր, ես կարծում եմ, որ կարող ենք վնասակար լինել: Մինչև այսօր զգուշորեն գաղտնի աշխատում էինք հետզհետե զինել և արթնացնել ժողովրդին, աշխատում էինք, որ նրանք իրար հետ կապ ունենան, միացած լինեն, և ուսում առնեն, բայց Դաշնակցությունը դրդում է անգեն ու անպատրաստ ժողովրդին՝ բռունցքներով գնալ սուլթանի ունեցած Կրուպի թնդանոթների դեմ, որպեսզի Եվրոպան մեզ օգնի: Ես Եվրոպայի օգնությանն այլևս չեն հավատում: Սասնո և մյուս կոտորածները ցույց տվին, որ մեր ժողովուրդը ավելի մեծ դժբախտության պիտի հանդիպի: Չեմ ուզում բաժին ունենալ վաղվա պատասխանատվության մեջ»:

Խրիմյանը մի քիչ մտածկոտ ման եկավ սենյակի մեջ, և ինձ դառնալով ասաց. «Հա, փիլիսոփայում ես: Հայրե՛՛, անմիջապես գնա Էջմիածին: Ես շուտով պիտի վերադառնամ, այնտեղ քեզ պաշտոն կտամ»:

Ընկերոջս հետ դուրս եկա առաջնորդարանից, մնաք բարով ասացի նրան ու գնացի բնակարանս: Հաշիվներս մաքրեցի տան տիրոջ հետ, աղքատիկ անկողինս ու իրերս կապկպելով՝ շալակս առի, քայլեցի դեպի երկաթուղու կայարանը: Այնտեղ գնացք նստելով՝ չվեցի Պետերբուրգ:

Իմ Պետերբուրգ հասնելուց երեք, թե չորս ամիս անց Խրիմյան կաթողիկոսը մայրաքաղաք ժամանեց: Ես գնացի տեսության: Նրա առաջին հարցը եղավ. «Հը՛, ինչի ես այդպես նիհարել, հիվանդ հո չե՞ս»:

Բացատրություններս անելուց հետո՝ թե ինչ եմ անում, կանչեց եկեղեցական խորհրդի նախագահ Վարդանյանին և պատվիրեց, որ ինձ իբրև ուսանողի թոշակ տան:

Հայոց եկեղեցին Նևսկի պրոսպեկտի վրա քաղաքի կենտրոնում էր գտնվում և շրջապատված էր հինգ հարկանի տներով: Այդ տները եկեղեցու սեփականությունն էին, որոնց բերած եկամուտներով ուսանողներ էին պահվում: Այդ եկեղեցու բակում էր, որ ուսանողները հավաքվում էին կիրակի օրերը՝ իրար տեսնելու համար: Ես էլ գնացի կիրակի առավոտ և խորհրդարան մտնելով՝ իմացա, որ ինձ երեսուն ռուբլի ամսաթոշակ են նշանակել: Երբ խորհրդարանից դուրս եկա, երկինքը, մարդիկը, շենքերը և ամեն բան արտաքու կարգի գեղեցիկ էին երևում: Ուրախությունից ինձ թվում էր, թե ոտքերս գետնին չէին դիպչում, ուրեմն ես պիտի կարողանայի ուսումս շարունակել: Փողոցով անցնելիս՝ շուրթերս լսելի ձայնով մրմնջում էին. «Ողջույն քեզ, ուսանողական կյանք»:

<http://www.encyclopedia.am/pages.php?bld=1&hld=1180>

<http://www.genocide-museum.am/arm/Terlemezyan.php>

There are no comments yet.